ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Նազիկ Նազարյան, հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվությունների մշտադիտարկման բաժնի պետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2023 թվականի սեպտեմբերի 18-ից մինչև սեպտեմբերի 29-ը:

3. Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Ֆինանսական հատվածի քաղաքականություններ» («Financial Sector Policies») թեմայով դասընթացի նպատակն էր զարգացնել և խորացնել քաղաքականության մշակման հմտությունները, մեկնաբանել դրանց հիմնական հասկացությունները, ծանոթանալ վերջիններիս վերլուծման ներկայիս ժամանակակից մեթոդներին:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

- Ֆինանսական հատվածի քաղաքականության ձևավորում
- Ճգնաժամային կառավարում և ֆինանսական անվտանգության ցանցեր
- Ֆինանսական ռիսկեր և վերահսկողության քաղաքականություն
- Ֆինանսական ռիսկ և համակարգային ռիսկ
- Ֆինանսական նորարարությունների կարգավորում

- Ֆինանսական հատվածի քաղաքականությունը կլիմայական ռիսկերը կառավարելու համար
- Մակրոտնտեսական և մակրոպրուդենցիալ քաղաքականության փոխազդեցությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ժամանակ հանդիպումները և ելույթներն իրականացվել են գործնական աշխատանքների, քննարկումների, բանավեճերի տեսքով (պայմանական տնտեսությունների օրինակով), որոնց ընթացքում պարզաբանվել են ֆինանսական քաղաքականության մշակման և իրականացման հիմնական սկզբունքները, ինչպես նաև այս համատեքստում միջազգային իրավական ակտերի, կիրառվող մեթոդները և մոդելները, դրանց շրջանակներում ֆինանսական հարաբերությունների սահմանման հիմքում ընկած ռիսկերի կառավարումը և դրանց անմիջական ազդեցությունների վերլուծությունը:

Մասնակիցների կողմից ներկայացվել են իրենց կողմից կատարված ուսումնասիրությունների և քննարկումների ամփոփ գնահատականները, խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները:

Մասնակիցների կողմից ներկայացվել են նաև շնորհանդեսներ կոնկրետ երկրների օրինակներով, որոնք վերաբերվում են ֆինանսական և տնտեսական տարբեր խնդիրների:

Ընդհանուր առմամբ դասընթացը բավականին հետաքրքիր էր՝ հարուստ վերլուծություններով և դրանց վերաբերվող տեղեկատվությամբ: Դասընթացից ստացված գիտելիքները կօգտագործվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետագա աշխատանքներում:

Բոլոր դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ: Կազմակերպվել են սեմինարներ, խմբակային աշխատանքներ և մասնակիցների կողմից կատարված աշխատանքների հիման վրա պատրաստվել ու ներկայացվել են շնորհանդեսներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ծանոթանալով տարբեր երկրներում ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների մշակման ու իրականացման առանձանահատկություններին՝ առաջարկում եմ քննարկել դրանց լավագույն միջազգային փորձերն ու արդի գործիքակազմերը՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ֆինանսատնտեսական քաղաքականությունների իրականացման համատեսքտում, քանի որ լավագույն փորձի դիտարկումն առաջնային կարևորություն ունի արդյունավետ քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով:

Ստորագրությունը, ամսաթիվը:

04.10.2023թ.